ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի արտահերթ նիստի

ք. Երևան 19 մարտի 2024թ.

Ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով Կառավարման խորհրդի նախագահի՝ 2021 թվականի ապրիլի 2-ի թիվ 05-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 7-րդ կետի 2-րդ և 4-րդ ենթակետերը՝ կայացել է Կառավարման խորհրդի արտահերթ նիստ:

Համաձայն Կառավարման խորհրդի նախագահի 2021 թվականի ապրիլի 2-ի N 05-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 21-րդ կետի՝ Կառավարման խորհրդի նիստերն իրավազոր են, եթե այդ նիստերին մասնակցում է խորհրդի անդամների 2/3-ից ավելին:

Մասնակցում են (Կառավարման խորհրդի անդամներ)՝

Հակոբ Սիմիդյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)
Աշխեն Շիրվանյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Արմեն Դանիելյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ
Բարդուխ Գաբրիելյան	Գիտությունների ազգային ակադեմիայի Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի ձկնաբանության լաբորատորիայի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Սուրեն Մելիքյան	«Մանթաշյանց» գործարարների միության անդամ
Յուրիկ Հակոբյան	«Հայաստանի երկրաբանների միություն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ
Շահեն Խաչատրյան	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ, աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնի վարիչ, երկրաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Բացակայում են՝

Գնել Սանոսյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Արմենուհի Հարությունյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Արման Պողոսյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Մասնակցում են նաև՝

Տարոն Հակոբյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ
Սերգեյ Մովսիսյան	Արագածոտնի մարզպետ
Խաչատուր Մկրտչյան	Արմավիրի մարզպետի տեղակալ
Վլադիմիր Խաչատրյան	Արարատի մարզպետի տեղակալ
Հայկ Մկրտչյան	Կոտայքի մարզպետի տեղակալ
Վարազդատ Մկրտչյան	Ջրային կոմիտեի նախագահի տեղակալ
Սերյոժա Գրիգորյան	Արմավիրի մարզպետի խորհրդական
Վլադիմիր Կիրակոսյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության պետ
Ժիրայր Խառատյան	Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի համակարգման և մեթոդաբանության վարչության պետ
Արթուր Այվազյան	Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ
Գորիկ Ավետիսյան	Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության պետի տեղակալ
Արտակ Սարգսյան	Երևանի քաղաքապետարանի քաղաքաշինական փաստաթղթերի ձևակերպման երկրորդ բաժնի պետ
Գրիգոր Բաբաջանյան	Քաղաքաշինական փաստաթղթերի կազմման բաժնի գլխավոր մասնագետ

Կառավարման խորհրդի անդամներ Գնել Սանոսյանը և Արմենուհի Հարությունյանը տեղեկացրել են, որ 2024 թվականի մարտի 19-ին մասնակցելու է այլ նիստերի, Արման Պողոսյանը գտնվում է գործուղման մեջ, ուստի վերջիններս չեն կարող ապահովել իրենց մասնակցությունը ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի արտահերթ նիստին:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2023 թվականի գործունեության տարեկան հաշվետվության քննարկում:

(Զեկուցող՝ ԲԸՏՄ ղեկավար Հ. Մարտիրոսյան)

Կառավարման խորհրդի դիտարկումները.

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի՝ 2024 թվականի մարտի 12-ի թիվ 02/02.39/9184-2024 հանձնարարականը՝ կայացել է ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի արտահերթ նիստ՝ 2023 թվականի գործունեության հաշվետվության քննարկման, ինչպես նաև 2024 թվականի մարտի 11-ին ՀՀ վարչապետի գլխավորությամբ կայացած տեսչական մարմինների գործունեության 2023 թվականի հաշվետվության քննարկման ժամանակ վարչապետի կողմից բարձրացված հարցերը քննարկելու նպատակով:

Տեսչական մարմնի ղեկավարի և նրա տեղակալների կողմից թվային տվյալներով մանրամասն ներկայացվեցին Տեսչական մարմնի վերահսկողության շրջանակներում առաջնահերթ ուղղություններից՝ կենսաբազմազանության, մթնոլորտային օդի պահպանության, ջրային ռեսուրսների կառավարման, ընդերքօգտագործման ոլորտներում իրականացված աշխատանքների արդյունքները:

Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Վրեժ Գալոյանը նշեց, որ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղերում և բնության հատուկ պահպանվող տարածքներում արձանագրված իրավախախտումների դեպքերը պայմանավորված են պահպանություն իրականացնողի պարտականությունները ոչ պատշաճ կատարելու, անտառների քանակական և որակական փոփոխությունների գրանցման նպատակով անտառների պետական հաշվառում չիրականացնելու, անտառշինական նախագծի բացակայության, անտառօգտագործման, անտառվերականգնման և անտառապատման կարգի խախտումներ թույլ տալու, արգելոցային գոտիներում տնտեսական գործունեություն իրականացնելու, մասնավորապես՝ ՊՈԱԿ-ի տեղամասերից փայտանյութի մթերման և դուրսբերման անտառահատման տոմսեր տրամադրելու, ազգային պարկի տարածքում առանց սահմանված նախագծերի համաձայնեցման, շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության դրական եզրակացության և շինարարության թույլտվության՝ տաղավարների կառուցապատում իրականացնելու հանգամանքներով:

Վերոնշյալ խնդիրների լուծման և ոլորտային ռիսկերի նվազեցման նպատակով առաջարկվեց՝

1. բնության հատուկ պահպանվող տարածքներում առկա ապօրինի շինությունների վերաբերյալ տեղեկատվության հետագա ընթացքն ապահովելու նպատակով տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրելուց զատ, բնության հատուկ պահպանվող

տարածքների կառավարումն իրականացնող ՊՈԱԿ-ների կողմից ևս ձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ,

2. լիազոր մարմնին առաջարկվել է Շրջակա միջավայրի նախարարի 2023 թվականի օգոստոսի 4-ի «Անտառահատման տոմսի և անտառային տոմսի օրինակելի ձևերը և դրանց տրամադրման կարգը հաստատելու մասին» N 267-Ն հրամանում լրացնել «Աշխարհագրական կոորդինատներ», ինչպես նաև «Յուղաներկի» փոխարեն օգտագործել «Պիտակներ» բառը:

Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պնդմամբ՝ մթնոլորտային օդի, ջրերի, հողերի, վտանգավոր նյութերի և թափոնների գործածության, օգտագործման և պահպանության ոլորտներում առավել հաճախ արձանագրվել են խախտումներ կապված առանց սահմանային թույլատրելի արտանետումների թույլտվության և դրա չափաքանակների գերազանցմամբ գործունեության, Ջրօգտագործող ընկերություններում առանց ջրօգտագործման թույլտվության ստորգետնյա և մակերևույթային ջրային ռեսուրսներից իրականացված ջրառի և տրված ջրօգտագործման թույլտվության պայմանների, առանց ջրօգտագործման թույլտվության ջրային ռեսուրսներից իրականացված ջրառի և ջրօգտագործման թույլտվությամբ տրամադրված չափաքանակները գերազանցելու, աղբավայրերի և աղբահանություն իրականացնող կազմակերպությունների կողմից վտանգավոր թափոնների գործածության լիցենզիայի և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական եզրակացության բացակայության, ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված հողի բերրի շերտի օգտագործման կարգի պահանջների չկատարման, տնտեսավարող սուբյեկտների կողմից հատկացված հողամասերում հողի բերրի շերտի պահպանման կանոնների խախտման հետ:

Վերոնշյալ խնդիրների լուծման և ոլորտային ռիսկերի նվազեցման նպատակով առաջարկվեց՝

1. փոշու արտանետումները շինարարական հրապարակներում և ընդերքօգտագործման տարածքներում կանխարգելելու նպատակով խոշոր շինարարական և ընդերքօգտագործող կազմակերպությունների ներկայացուցիչներին շինարարական հրապարակներից դուրս փոշու արտանետումները նվազեցնելու համար կիրառել նոր տեխնոլոգիաներ՝ օրինակ փոշու նստեցման ջրի թնդանոթներ, ինչպես նաև այն դարձնել ՇՄԱԳ-ի փորձաքննական եզրակացության պահանջ,

2. տեղական ինքնակառավարման մարմիններին՝ ընդունել համապատասխան որոշումներ՝ շինարարական նյութերի (ավազ, խիճ) վաճառքի բացօթյա կետերում առևտրի կանոնների պահպանման նկատմամբ հսկողությունը խստացնելու՝ մթնոլորտ փոշու արտանետումները նվազեցնելու և կանխարգելելու, ինչպես նաև տեղում վերահսկողություն իրականացնելու նպատակով,

3. քաղաքաշինական գործունեության բնագավառում ի լրումն քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված գործող նորմերի՝ լրացուցիչ պայման սահմանել կառուցապատողների կողմից քաղաքաշինական գործունեության

օբյեկտում կատարվող կամ կատարվելիք շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում փոշու արտանետումները նվազեցնելու համար ժամանակակից հասանելի տեխնոլոգիաներ կիրառեու վերաբերյալ,

4. տեղական ինքնակառավարման մարմիններին՝ խստացնել քաղաքաշինական նորմերի պահպանման նկատմամբ հսկողությունը, որի արդյունքում ճանապարհներին իրականացվող խրամուղիների փորման՝ գազատարների, էլեկտրահաղորդալարերի, կոյուղատարների, ջրագծերի և այլ կոմունիկացիաների անցկացման աշխատանքների ոչ ճիշտ կազմակերպման (շինարարական հրապարակները սահմանված ձևով չկահավորելու) և ժամանակին չասֆալտապատելու հետևանքով առաջացող փոշու արտանետումները կնվազեն,

5. համադրել լիազոր մարմնի կողմից սահմանային թույլատրելի արտանետումների թույլտվությունները և եզրակացությունները՝ հետագա անհամապատասխանություններից (մասնավորապես՝ շինհրապարակներում բետոնհանգույցի շահագործման համար տրված թույլտվության և նույն տնտեսավարողի գործունեության ՇՄԱԳ փորձաքննության նախագծում առկա անհամապատասխանությունները) խուսափելու նպատակով:

6. փայտածուխի արտադրության ընթացքում անտառամերձ տարածքներում և անտառներում առաջացող հրդեհներից խուսափելու համար նշված գործունեությունը դարձնել լիցենզավորված, որով կիրառված սահմանափակումներով կլուծվեն նաև հողի նշանակության, տեղորոշման հարցերը:

Անդրադառնալով ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության ուղղությանը՝ Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալը զեկուցեց, որ ստուգումների արդյունքում պարզվել է՝ Ջրօգտագործող ընկերությունները միջոցներ չեն ձեռնարկել ջրօգտագործման թույլտվություններ ստանալու, ժամկետները լրացած ջրօգտագործման թույլտվությունները սահմանված կարգով երկարաձգելու և անվանափոխվելուց հետո ձևակերպելու, ջրաչափերի տեղադրման, կապարակնքման և գործունեությունը ՀՀ ջրային օրենսգրքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Ասատուր Վարդանյանը ընդգծեց, որ ընդերքօգտագործման և ընդերքի պահպանության ոլորտում առավել հաճախ արձանագրվել են հետևյալ հիմնական խախտումները.

1. Ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընկերություններում ընդերքօգտագործման պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը,

2. ընկերությունները ընդերքօգտագործման աշխատանքները չեն իրականացնում օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պայմաններին համապատասխան,

3. ընդերքի վերահսկողության ոլորտում հայտնաբերված ամենատարածված խնդրիներից է առանց հողատարածքի օգտագործման պայմանագրի և/կամ առանց հողատարածքի նպատակային նշանակությունը փոխելու աշխատանքներ իրականացնելը: Այդ առումով Տեսչական մարմինն անհրաժեշտ է համարում համայնքների կողմից վերահսկողության ուժեղացումը ապօրինի հողօգտագործումների մասով:

4. համայնքներում համայնքի ավագանու կամ համայնքի ղեկավարի որոշմամբ առանց ընդերքօգտագործման իրավունքի առկայության տնտեսավարող սուբյեկտներին տրամադրվում է համայնքային հողամասերի սահմաններում պետական հաշվեկշռում չհաշվառված ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման, քարհավաքման և սելավատարերի մաքրման աշխատանքների թույլտվություն՝ առանց լիազոր մարմնին տեղյակ պահելու:

Նշված դեպքերում անհրաժեշտ է խստագույնս առաջնորդվել Կառավարության 2013 թվականի փետրվարի 21-ի «Իրավաբանական անձանց և քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի սահմաններում ընդերքօգտագործման կարգը սահմանելու» թիվ 152-Ն և ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 10-ի «Հողագրունտի հանույթի կարգը սահմանելու մասին» թիվ 572-Ն որոշումների պահանջներով: Նշված խնդիրը բարձրացվել է նաև ՀՀ վարչապետի 2023 թվականի մարտի 27-ի «Միջգերատեսչական աշխատանքային խումբ ստեղծելու, միջգերատեսչական աշխատանքային խմբի կազմը հաստատելու մասին» թիվ 342-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի աշխատանքների շրջանակում, ինչի արդյունքում Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից միջոցներ են ձեռնարկվել համայնքներին իրազեկելու ուղղությամբ:

5. Արարատյան դաշտավայրում՝ Արմավիրի և Արարատի մարզերում, ձկնաբուծարանների կառուցման պատրվակով տնտեսավարողների կողմից ավազի ապօրինի արդյունահանում է իրականացվում: Համայնքների ղեկավարների կողմից տրամադրվում են ձկնաբուծարաններ կառուցելու թույլտվություններ, այնինչ՝ անհրաժեշտ է նշել, որ դեռևս 2014 թվականին Արարատյան դաշտավայրում արգելված է նոր խորքային հորերի հորատումը, հետևաբար, առանց ջրօգտագործման թույլտվության ձկնաբուծարանների շահագործումը հնարավոր չէ: Ձկնաբուծարաններ կառուցելու թույլտվություններ են տրամադրվում այնպիսի վայրերում, որտեղ ընդհանրապես բացակայում են ոչ միայն խորքային հորերը, այլ նաև ջրային պաշարները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ պետք է բացառել նման թույլտվությունների տրամադրումը:

6. Տեսչական մարմնի աշխատակիցները ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման ընթացքում հայտնաբերված ապօրինի ընդերքօգտագործման դեպքերի վերհանման արդյունքում իրականացնում են հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման հաշվարկ, իսկ ապօրինի տեղահանված օգտակար հանածոյի ծավալի մասին տեղեկատվությունն ուղարկվում է Պետական եկամուտների կոմիտե: Վերջինս ներկայացվաց տվյալների հիման վրա հաշվարկում է պետությանը պատճառված վնասը:

Ապօրինի ընդերքօգտագործման հետևանքով ռեկուլտիվացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հաշվարկ և կարգավորում օրենքով սահմանված չէ, այսպիսով՝ առաջանում է օրենսդրական բաց, որը պահանջում է լուծում:

Այս ուղղությամբ Շրջակա միջավայրի նախարարության գործընկերների հետ համատեղ աշխատանքներ են իրականացվում օրենսդրական բացը լրացնելու ուղղությամբ և առաջիկայում նախատեսվում է համապատասխան օրենսդրական առաջարկության ներկայացում:

7. Արձանագրվել են ընդերքօգտագործման իրավունքով տրամադրված տեղամասերի, հողամասերի կոորդինատների անճշտությունների և անհամապատասխանության դեպքեր, մասնավորապես՝ օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությամբ տրամադրված կոորդինատները չեն համապատասխանում պաշարների հաշվարկմանը կից երկրաբանական քարտեզներով նշված տեղամասերի հետ (շեղումները երբեմն կազմում են տասնյակ կիլոմետրեր): Կոնկրետ դեպքով Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համատեղ աշխատանքային խումբ ստեղծելու միջոցով իրականացվել է ճշգրտում:

Վերահսկողական գործընթացները մետաղական հանքավայրերում առավել արդյունավետ դարձնելու նպատակով հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության մեջ ներառվել է Տեսչական մարմնի կողմից առաջարկված կարգավորումը:

Ասատուր Վարդանյանը արձանագրեց, որ հանքավայրերի վերահսկման ուղղությամբ որակի վերահսկողական գործընթացները և կառավարման համակարգերը կարևոր նշանակություն ունեն հանքարդյունաբերության արտադրողականության համար, քանի որ արտադրանքի որակի նույնիսկ 1% տարբերությունը կարող է մեծ փոփոխությունների հանգեցնել կորզվող մետաղների վերջնական որակի և ծավալների վրա:

Սա գործընթաց է, որը պահանջում է իրական ժամանակում տվյալների հավաքագրում: Դա կարևոր է որակի կորուստը նվազագույնի հասցնելու համար: Իրական ժամանակի տվյալների հավաքագրումը նշանակում է, որ Տեսչական մարմինը նաև տեղյակ կլինի իրական ժամանակում որակի անկման մասին: Տվյալների հոսքերը և գործընթացների ավտոմատացումը որակի վերահսկողությունը դարձնում են ակտիվ, շարունակական գործընթաց: Հավաքված բոլոր արդյունքները միավորվում են կենտրոնացված տվյալների բազայում, հետագայում հավաքագրված տվյալների հիման վրա ստեղծվում են հանքավայրի Grid QA/QC և 3 D մոդուլները:

Ի վերջո, ճշգրիտ վերահսկողական գործընթացը նվազագույնի կհասցնի կողմնակալ կամ չներկայացված մետաղները թաքցնելու հնարավորությունները:

Արդյունքում Տեսչական մարմինը նշված համակարգի և դրոնների միջոցով ունենալու է հնարավորություն՝ լիարժեք վերահսկել մետաղական հանքավայրերի շահագործումն իրական ժամանակում:

Գիտությունների ազգային ակադեմիայի կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի ձկնաբանության լաբորատորիայի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բարդուխ Գաբրիելյանն առաջարկեց կենդանական աշխարհի, մասնավորապես բազմացման շրջանում գտնվող կենդանու որսի նկատմամբ պատժամիջոցները խստացնել, որին ի պատասխան Տեսչական մարմնի ղեկավարը

հայտնեց, որ վարչական տույժերի մասով Շրջակա միջավայրի նախարարության նախաձեռնությամբ արդեն իսկ օրենսդրական փոփոխություններ ներկայացվել են:

Արմավիրի մարզպետի տեղակալ Խաչատուր Մկրտչյանը, անդրադառնալով օդի աղտոտվածության հիմնախնդրին, առաջարկեց շինթույլտվության նախագծում որպես պահանջ /կարգ/ սահմանել, թե ինչպես պետք է իրականացվի շինարարական աղբի տեղափոխումը:

Ջրային կոմիտեի նախագահի տեղակալ Վարազդատ Մկրտչյանն առաջարկեց մշակել մեխանիզմներ ջրօգտագործման թույլտվություն ստանալու գործընթացը պարզեցնելու համար, քանի որ ջրային ռեսուրսների գնահատման աշխատանքներում պահանջներն այնպիսին են, որ հնարավոր չէ 3 ամսում ստանալ ջրօգտագործման թույլտվություն:

Կառավարման խորհրդի նախագահ Հակոբ Սիմիդյանն առանձնահատուկ կարևորեց օդի աղտոտվածության և ջրային պաշարների արդյունավետ օգտագործման հիմնախնդիրները, և նշեց, որ խորքային հորերով ջրօգտագործման խնդրի լուծման ուղղությամբ առցանց հաշվիչներ տեղադրելու եղանակով հսկողությունը իրագործման փուլում է:

ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ) _____ Հ.Սիմիդյան

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետ (խորհրդի քարտուղար) _____ Վ.Բարսեղյան